ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվական թիվ 130-Ա

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԵՐԱՍԻՄԻ ՂՈՒԼԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿԱՅԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆԴԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 8-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 10-ի թիվ 286 նիստի արձանագրությունը, դրական եզրակացությունը և Սվետլանա Գերասիմի Ղուլարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Սվետլանա Գերասիմի Ղուլարյանին 2025 թվականի հունիսի 20-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Կայանի Հովհաննես Հինդլյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-06-20 12:44:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից